ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 հունիսի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

84
(2934)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՉԱՐԺԱՆԱՑԱՎ

2021-2024 թվականների ընթացքում ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրականացրել է շահերի բախման դեպքերին առնչվող շուրջ 30 մեդիա հրապարակման եւ երկու տասնյակից ավելի դիմումի ուսումնասիրություն, որոնց գերակշիռ մասը վերաբերել են պետական գնումների գործընթացներին:

Հանձնաժողովն առերեւույթ շահերի բախման դեպքերում հարուցել է համապատասխան վարույթներ:

Միաժամանակ, օրենսդրական գործող կարգավորումներով պայմանավորված՝ Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել անդրադառնալու պետական գնումների գործընթացների նկատմամբ պետական պաշտոն զբաղեցնող անձանց ունեցած անուղղակի ազդեցության դեպքերին:

Այսպիսով՝ ըստ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ միայն առողջապահության նախարարի հետ կապվող առեւտրային կազմակերպության՝ պետական գնումների մասնակցության վերաբերյալ առկա են 20-ից ավելի մեդիա հրապարակումներ, որոնց մի մասն արվել է հաշվետու տարում՝ 2023 թվականին:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը չակերտները չի բացում, սակայն պարզից էլ պարզ է, որ խոսքը Անահիտ Ավանեսյանի մասին է:

Բանն այն է, որ դեռ ապրիլին իրավապահները մտել էին առողջապահության նախարարություն եւ «Ուիգմոր» հիվանդանոց. հարցը հիվանդանոցին տրամադրվող գումարներն էին՝ պետպատվերների տեսքով: Իսկ «Ուիգմոր» հիվանդանոցը իրավապահների թիրախն էր դարձել, քանի որ խոսվում էր հիվանդանոցի եւ Անահիտ Ավանեսյանի միջեւ փոխկապակցվածության մասին:

Բացի նշված հրապարակումներից՝ շահերի բախման համատեքստում նշված դեպքերը քննելու վերաբերյալ Հանձնաժողովը ստացել է նաեւ քաղաքացիներից դիմումներ:

Դիմումների եւ հրապարակումների ուսումնասիրության արդյունքում, վերլուծելով փաստական հանգամանքները եւ վերաբերելի օրենսդրական կարգավորումները՝ արձանագրվել է, որ նախարարի հետ փոխկապակցված անձի բաժնեմասնակցությամբ առեւտրային կազմակերպությունը պարբերաբար մասնակցել է պետական մարմինների կողմից պատվիրվող գնման գործընթացների, իսկ միայն առողջապահության նախարարության հետ կնքել է գնման 17 պայմանագիր:

Հաշվի առնելով, որ նախարարության կողմից պատվիրված գնման գործընթացներում նախարարը չի հանդիսացել գնման գործընթացի համար պատասխանատու պատվիրատուի ղեկավար, եւ ֆորմալ առումով գնման ընթացակարգերը պահպանված են եղել՝ վերջինիս կողմից շահերի բախման առերեւույթ խախտման դեպքով վարույթներ չեն հարուցվել:

Կարճ ասած՝ առողջապահության նախարարությունը չարժանացավ էկոնոմիկայի նախարարության ճակատագրին, եւ չեղան աղմկահարույց ձերբակալություններ:

Հայրենի իշխանությունների համար ամառը թեժ աշխատանքային մթնոլորտում է անցնում: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ այսօր Հանքավանում տեղի է ունենալու իշխող կուսակցության քաղաքական ժողովը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հանքավանից վերադառնալուն պես՝ ՔՊ-ականները «լծվելու են» խորհրդարանական աշխատանքներին: Իշխանական պատգամավորները մտադիր են հուլիսի հենց սկզբին արտահերթ նիստեր նախաձեռնել, ընդ որում՝ ոչ թե մեկ նիստ, այլ նստաշրջան: Մինչ այդ նիստեր կանեն նաեւ գլխադասային հանձնաժողովները: Հաջորդ շաբաթ՝ հունիսի 25-ին, արտահերթ նիստ է անելու նաեւ ԱԺ անվտանգության եւ պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովը: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ Նիկոլ Փաշինյանը դեռ մտադիր չէ ՔՊ-ականներին արձակուրդ տալու ու աշխատանքային թեժ անցուդարձի մեջ է պահում իր թիմակիցներին, հավանաբար, ցույց տալու համար, որ չնայած ամռան հանգստի շրջանին ու արձակուրդային տրամադրություններին՝ նրանք աշխատում են:

Կոռուպցիոն ռիսկեր պարունակող ամենաթիրախային ոլորտը՝ պետգնումները, գրեթե ամենօրյա լուսաբանման ռեժիմում են՝ ընթերցողին «ավետելով» հերթական գնման հավանական իրավախախտումը: Այս պայմաններում իշխանությունը երկրի հարյուրավոր ՀԿ-ներից եւ ՁԼՄ-ներց ընտրել է մեկ առողջապահական ուղղվածության ՀԿ (տե՛ս լուսանկարը ArmLur.am կայքում), որի չորս անդամը պետք է հսկողություն իրականացնեն միլիարդավոր դրամների գնումների նկատմամբ: Սա նշանակում է, որ մեկ կազմակերպություն, առանց մրցակցության, ահռելի վերահսկողական պատասխանատվության տակ է: Իսկ մենաշնորհը միայն բիզնեսում չէ, որ վատ հետեւանքներ ունի. այն մերժելի է ամենուր:



«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանների կողմից կիրառված լուսաձայնային նռնակների ու տեղի ունեցած բախումների առիթով հարուցված քրեական վարույթով քննչական կոմիտեն որոշում ունի. մի շարք լրատվամիջոցների լրագրողների եւ օպերատորների հարցաքննությունից հետո հրավիրում են նախաքննական մարմին եւ հայտնում, որ կատարված դեպքերով նրանց ճանաչել են տուժող: Մնում է սպասել, որ լրատվամիջոցների լրագրողներին ու օպերատորներին վնասներ հասցրած պատասխանատուներին կանչեն պատասխանատվության: Ի դեպ, գրել էինք, որ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քննիչները լրատվամիջոցների ներկայացուցիչներին հարցաքննելիս հարցրել էին, թե ինչ կապ ունեն շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանի հետ, ում հորդորով կամ շահագրգռությամբ են գնացել Բաղրամյան պողոտա, արդյոք հեռախոսազրույց ունեցել են շարժման առաջնորդի հետ: Հարցաքննված լրատվամիջոցների ներկայացուցիչները քննիչների խաչաձեւ, բայց նույնաբովանդակ հարցերին պատասխանել էին, որ գնացել են իրենց մասնագիտական գործունեությունը իրականացնելու, ինչը անում են բոլոր դեպքերում ու իրավիճակներում՝ անկախ առաջնորդի ով լինելուց, քանի որ դա իրադարձություն է երկրում, իսկ ՁԼՄ-ներն էլ լուսաբանում են տեղի ունենալիքը: Հավելենք, որ այս պատկերին զուգահեռ, իրավապահները ակտիվ գործընթաց են սկսել եւ կալանավորում են «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասնակիցներին: Ապրիլից մինչեւ օրս՝ տեղի ունեցած ակցիաներին մասնակցության համար պաշտոնապես կալանավորված է 29 քաղաքացի, բայց գործը այսքանով չի ավարտվի. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում նոր կալանավորումներ եւս կլինեն»:

ԶՐՈՒՅՑ

«ԺՈՂՈՎՐԴԻՆ ՎԱԽԻ ՄԵՋ է ՊԱՀՈՒՄ», ԱԲՈՎՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախկին ղեկավար, սահմանադրագետ Արման Աբովյանին:

Արման Աբովյանի հետ քննարկել ենք Ադրբեջանի կողմից հնարավոր պատերազմի, հանրաքվեի եւ Սրբազան շարժման մասին:

-Պարոն Աբովյան Ադրբեջանը կարծես թե կրկին պատերազմով է սպառնում, ի՞նչն է սրա պատճառը: Հնարավո՞ր է, որ «Սրբազան շարժում»-ը պատճառ լինի:

-Մասնակի կարելի է կապել «Սրբազան շարժման» հետ, սակայն հակառակ էֆեկտով: Մենք շատ լավ հասկանում ենք, որ Ադրբեջանի համար այս իշխանությանմնալը կենսական նշանակություն ունի: Եվ այս կամ այն պարագայում, այո կարող են միջնորդված գործողություններ կատարել, որոնք ավելորդ լարվածություն կմտցնեն հայկական հասարակության ներսում եւ տեղ կտա իշխանությանը ավելի լայն օգտագործել մանեւրելու հնարավորությունը: Բայդ դա կրկին շինծու օրակարգ է, որովհետեւ Հայաստանի Հանրապետության ուղղությամբ Ադրբեջանի նկրտումները, ըստ էության, գլոբալ առումով կապ չունեն Հայաստանի ներսում կատարվող իրադարձությունների հետ: Մեծ հաշվով միեւնույնն է, թե ով կլինի իշխանության գլխին, կարեւորն այն է, թե Ադրբեջանն ինչ գործիքակազմ կկիրառի այս կամ այն իրավիճակում: Եթե, օրինակ, այս իշխանությունը, որը հնազանդորեն կատարում է Ադրբեջանի բոլոր նախապայմանները, վտանգված լինի, ապա Ադրբեջանը իհարկե անհանգիստ կլինի ու այլ գործիքակազմ կկիրառի: Սակայն եւս մի նրբերանգ կա. այն ինչ անում է այսօրվա իշխանությունը հակառակ գործընթաց է: Քաղաքականությունը, որը այսօր վարում է իշխանությունը, այսպես, թե այնպես, նպաստում է Ադրբեջանի կողմից պատերազմի սկսելուն, այսինքն՝ իշխանությունն ասում է եկեք տանք, թե ոչ՝ պատերազմ կլինի: Սա գլոբալ առումով ժողովրդին անասնական վախի մեջ պահելու նպատակ ունի: Ժողովուրդը շատ լավ հասկանում է, որ ինքը միջոց է Ադրբեջանի համար՝ ակտիվ գործողությունները գենեռացնելու համար: Հայաստանի իշխանությունը, ըստ էության, փլուզեց Հայաստանի հյուսիսային ամուր գոտին եւ բերեց սահմանին կանգնեցրեց Ադրբեջանի հարվածային ռազմական ստորաբաժանումները՝ անունը դնելով սահմանապահ:

Եթե ժամանակին Ադրբեջանը մի քանի տասնյակ կամ հարյուր կիլոմետր հեռու էր Հայաստանի լոգիստիկ հանգույցներից, որոնք կենսական նշանակություն ունեն իրականում Հայաստանի համար, ապա այսօր ուղիղ թիրախային կետում ենք: Հաշվի առնելով Ադրբեջանի պետական դոկտրինը, որը բազմիցս հնչեցվել է, Հայաստանը երեք փուլով պետք է չեզոքացվի՝ կռվով, ՀՀ իշխանության քայլերով պատերազմի շանտաժով եւ այլն: Այսպես կոչված անկլավային քաղաքականությունը հենց այդ նպատակն ունի:

Ադրբեջանը նպատակ չունի Հայաստանի հետ խաղաղություն հաստատելու:

-Հանրաքվեին անդրադառնալով պետք է նշել, որ օրերս Նիկոլ Փաշինյանը Սյունիքում ժողովրդի հետ հանդիպմանը նշել էր, որ հաջորդ հանձնվելիք տարածքները, ամենայն հավանականությամբ, կլինեն սյունիքից: Չնայած այդ ամենին Նիկոլ Փաշինյանին դիմավորել էին բավական ջերմ: Նման ընդունելությունը տեսնելով ի՞նչ եք կարծում, հանրաքվեն ի՞նչ կարող է փոխել:

-Ինչ վերաբերվում է այս իշխանությանը սատարող մարդկանց ես նրանց չեմ մեղադրում: Մարդիկ գտնվում են տեղեկատվական տեռորի տակ: Սակայն այդ թիվը սակավ է, ՀՀ ժողովրդի մեծ մասը վստահ եմ հասկանում է, որ այս իշխանությունը մեզ տանում է սպանդի: Պետք է հասկանալ, որ հասարակության մեջ կան տարբեր խավեր: Մարդիկ վախեցած ու մոլորված են:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՈՒՂԵՐՉ է ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանի մեքենայի առեւանգումն ուղերձ է Բաքվին: Այս մասին երեկ՝հունիսի 21-ին, Արցախի ներկայացուցչության շենքի մոտ լրագրողների հետ զրույցում ասաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը:

«Սա բացառապես քաղաքական ուղերձ է ուղղված Ադրբեջանին, որ տեսնում եք, ձեր բոլոր հրամանները հլու հնազանդ կատարում ենք: Ուղերձ է նաեւ արցախցիներին, որ արցախցիները որեւէ ներգրավվածություն չունենան Հայաստանում տեղի ունեցող քաղաքական եւ հանրային գործընթացներին»,- նշեց պատգամավորը եւ հավելեց, որ այդ գործընթացը ձախողվելու է:

Հարցին՝ արդյո՞ք այս քայլն արվել է նաեւ այն պատճառով, որ Շահրամանյանը վերջերս լրագրողներին տված ճեպազրույցում ասել էր, թե հրապարակային անդրադառնալու է Փաշինյանի կողմից արված հայտարարություններին, Խաչատրյանն ասաց. «Այդ ամեն ինչը չեմ բացառում, սա իհարկե նաեւ լռեցնելու նպատակ էր հետապնդում: Իշխանությունները 44-օրյա պատերազմի ծագման եւ պատճառների մասին այնքան ստեր են պատմել, որ նրանք ամենեւին չեն ցանկանա, որ այդ ստերը մերկացվեն»:

Պատգամավորի խոսքով՝ արցախցիներին իշխանությունը փորձում է թողնել առանց ղեկավարի. «Իսկ առանց առաջնորդության մնացած ժողովուրդը չի կարող կազմակերպվել, եւ, ցավոք, հակված կլինի լքելու Հայաստանը»:

Ի՞ՆՉ ԹՈՒՂԹ ԵՆ ՏԱԼԻՍ ԿԻՐԱՆՑԵՑԻՆԵՐԻՆ

Բացի մարզպետարանին ուղղված գույքից հրաժարվելու ու փոխհատուցման մասին խնդրանքի թղթից, ուրիշ թուղթ էլ են տալիս, որ մարդիկ ստորագրեն, ու նորից «մութ» է այդ թղթի բովանդակությունը: Այս մասին, երեկ՝ հունիսի 21-ին, Կիրանցում լրագրողների հետ զրույցում հայտնեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը:

«Փաստաթղթի մեջ հստակ երեւում է՝ հրաժարվում ենք գույքային եւ այլ իրավունքից, բայց չի ասվում՝ որն է «այլ» իրավունքը: Կարծում ենք՝դա անում են, որ հետագայում քրգործ հարուցել չստացվի: Իշխանափոխությունից հետո քրեական պատասխանատվության պետք է ենթարկվեն այս հակասահմանադրական գործընթացի համար»,- ասաց նա:

Գառնիկ Դանիելյանը նշեց՝ մարդիկ կան Կիրանցում, որ ունեն կադաստրի վկայականներ ու չեն վերցրել գումարները. «Մարդիկ չեն ուզում պատասխանատվություն կիսել իշխանության հետ: Ամբողջ պետական ապարատն աշխատում է գյուղացիների հետ: Այդ ճնշումներն իրականացվում են ուժային կառույցների ՏԻՄ մարմինների»,- նշեց պատգամավորը:

Գառնիկ Դանիելյանին տեղեկություններ են հասել, որ Տիգրանաշենի բնակիչների հետ հատ-հատ աշխատում են եւ՛ պաշտոնյաները, եւ՛ հատուկ ծառայությունները:

«Չեն ասում՝ հանձնում ենք, ասում են՝ կարո՞ղ է ձեր գույքը ուզենաք վաճառել: Ու ամբողջ Հայաստանը դառնալու է Կիրանց, Տիգրանաշեն», - ընդգծեց պատգամավորը:

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Շարժումը մարելու վերաբերյալ Սուրեն Պետրոսյանի ձեւակերպումն այլ է եղել: Այս մասին Կիրանցում լրագրողների հետ զրույցում ասաց Բագրատ Սրբազանը:

«Երեկ էլ եմ հանդիպել Սուրենին, երկար խոսել ենք: Բոլորը ջղերի վրա, զգացումների մեջ է դեպի բարին գնալու, այս շարժումը ավարտին հասցնելու: Մենք էլ համբերատար չենք չէ՞, միգուցե ինձնից էլ է կախված, առաջին պատասխանատուն ես եմ, եւ՛ պատասխանատուն, եւ՛ մեղավորը», - ասաց Սրբազանը:

ՀԱՅՏՆԵԼ ԵՆ «ԽԻՍՏ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»

Իսրայելի ԱԳՆ-ն կանչել է Հայաստանի դեսպանին եւ «խիստ նկատողություն» հայտնել՝Պաղեստին պետությունը ճանաչելու մասին ՀՀ ԱԳՆ-ի հայտարարությունից հետո: Այս մասին գրում է The Times of Israel-ը:

Պարբերականը նշում է, որ Հայաստանից առաջ Պաղեստինի անկախությունը ճանաչել են Սլովենիան, Իռլանդիան, Իսպանիան, Նորվեգիան, ինչից հետո Իսրայելը, ըստ տեղեկությունների, առաջարկել է նվազեցնել հարաբերությունները տվյալ երկրների հետ:

Նշենք, որ այսօր ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել Պաղեստինի պետության ճանաչման վերաբերյալ:

«ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ ՉԻ ՍՏԱՑՎԵԼ». ԼԱՎՐՈՎ

ՀԱՊԿ-ից Հայաստանի դուրս գալու կարգը անդամ երկրների արտգործնախարարների խորհրդի նիստում չի քննարկվել, քանի որ համապատասխան դիմում չի ստացվել: Այս մասին լրագրողներին ասել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը:

«Ոչ, Հայաստանի դուրս գալու կարգը չի քննարկվել, քանի որ համապատասխան դիմում չի ստացվել»,- ասել է նախարարը:

Պատասխանելով ՀԱՊԿ-ից Հայաստանի դուրս գալու հնարավոր հետեւանքների մասին հարցին՝ Լավրովը նշել է, որ Հայաստանից որեւէ փաստաթուղթ չի ստացվել, որ քննարկեն հետեւանքները:

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ ԿՄԵԿՆԻ ՆՅՈՒ ՅՈՐՔ

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը հաջորդ շաբաթ կմեկնի Նյու Յորք:

Նա հունիսի 25-27-ը Նյու Յորքում կմասնակցի Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) տնտեսական եւ սոցիալական խորհրդի հումանիտար հատվածի նստաշրջանին:

Վիլեն Գաբրիելյանի գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը կկատարվի պետբյուջեի հաշվին:

ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՆՎԵԼ ԵՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԻՑ



«Ժողովուրդ» օրաթերթը արձանագրում է, որ Նիկոլ Վովայի Փաշինյանի՝ ՀՀ վարչապետի, անձնական տվյալները հեռացված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի ՀՀ ընտրողների ռեգիստրից:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց եւ պարզեց, որ ՀՀ ընտրողների ռեգիստրում չկան նաեւ Նիկոլ Փաշինյանի երեխաների եւ կնոջ տվյալները:

«Ժողովուրդ» օրաթերթին ԿԸՀ-ից հայտնեցին, որ ՀՀ ընտրողների ռեգիստրը ՀՀ ՆԳՆ ոստիկանության եւ Միգրացիոն ծառայության պատասխանատվության ներքո է:

ԻՆՉՈՒ՞ ԵՆ ՏԱՐԵԼ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԵՔԵՆԱՆ

Երեւանում Արցախի ներկայացուցչության մոտ են հավաքվել իրավապահները, կոտրելով շենքի մուտի դարպասները՝ առգրավում են Արցախի վերջին նախագահ Սամվել Շահրամանյանին սպասարկող մեքենան:

Նշենք, որ Շահրամանյանի թիկնազորի աշխատակից Աշոտ Դանիելյանը օրեր առաջ հրաժարվել էր մեքենան հանձնել, որից հետո ոստիկանները փորձել էին տարհանել, բայց այդպես էլ չի հաջողվել, մեքենան կնքել էին ու հեռացել:

Ինչո՞ւ էին իրավապահները չորս ժամ փորձում առգրավել Սամվել Շահրամանյանին սպասարկող մեքենան, որը, ինչպես վստահեցնում է փաստաբանը, Արցախի սեփականությունն է:

Քննչական կոմիտեից հայտնել էին, որ մեքենան առգրավվելու որոշումը կապված է դեռ տարեսկզբին հարուցված մի քրեական վարույթի հետ՝ էական նշանակության հանգամանքներ պարզելու համար: Խոսքը թիկնազորի աշխատակից Աշոտ Դանիելյանի գործի մասին է: Փետրվարին նա ձերբակալվել էր թմրանյութ պահելու եւ իրացնելու կասկածանքով: Դանիելյանը ազատ արձակվեց, նրան մեղադրանք չառաջադրվեց, բայց վարույթը շարունակվում է:

Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանին Քննչական կոմիտեն հրավիրել է հարցաքննության:

ՏԱՎՈՒՇԻ ԿՈՂՔԻՆ

ՍՐԲԱԶԱՆԸ ԵՎ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ՝ ՈՍԿԵՊԱՐՈՒՄ

Երեկ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազան Գալստանյանը, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանն ու բազմաթիվ աջակիցներ մեկնել են Տավուշ՝ Կիրանց, Ոսկեպար, որպեսզի տեղում ծանոթանան իրավիճակին, տեսնեն, թե որտեղից են անցնում Նիկոլ Փաշինյանի ասած պատշտպանական փշալարերը:

Շարժման առաջնորդին եւ մասնակիցներին բնակիչները սպասել են եկեղեցու բակում:

Ասում էր՝ Կիրանցի դպրոցի մոտ ծառ ենք տնկելու, հիմա այդ դպրոցն օգտագործելո՞ւ են, որ միլիոններով բյուջեից ծախս են արել: Այս մասին Կիրանցում բնակիչների հետ զրույցում ասել է Բագրատ Սրբազանը:

«Հին դպրոցը խնդիրներ ունի, որի կողքը մենք բունկեր ենք կառուցել, որ եթե դիմացից հարված լիներ, աշակերտները մտնեն այնտեղ: Որոշել են նոր դպրոց կառուցել, գյուղում առավելագույնը 50 աշակերտ է եղել, հիմա նայեք, թե ինչ հսկայական դպրոց է կառուցվել, չգիտեմ քանի կերտ է եղել, հիմա նայեք, թե ինչ հսկայական դպրոց է կառուցվել, չգիտեմ քանի հարյուր աշակերտի համար, հսկայական գումարներ են ծախսել, հիմա ասում են՝ դպրոցը չի գործարկվելու», - ասաց նա՝ հավելելով, որ հավանաբար հենց սկզբից էլ մտածել են, որ դա որպես դպրոցի չի ծառայելու:

Անդրադառնալով տուն կորցրած Կիրանցի բնակիչներին փոխհատուցումներ տալու խնդրին, Բագրատ Սրբազանն ասաց. «Գնացեք հարցրեք, բյուջեում այդպիսի տող կա՞, որից տալիս են այդ գումարները: Այստեղ 1000 դոլարանոց վագոն-տնակի համար 50 հազար դոլար են առաջարկել»:

Լրագրողների հետ զրույցում սրբազանն անդրադարձել է շարժման նպատակներին. «Սա արդեն գոյաբանական հարց է դարձել, սահմանն արդեն մետրերով է չափվում: Երկրորդ պարագան, ես ցանկացա այստեղ գալ, որ մարդիկ որեւէ ձեւով միայնակության զգացում չունենան, որովհետեւ իրենք շատ մեծ պայքարի մեջ են: Մենք մի քանի մեքենայով պետք է գային, բայց հարյուրավոր մարդիկ են ավելացել: Սա նշանակում է, որ մարդկանց ընդվզումը շատ առարկայական է: Սա չի կարող մոռացվել»,-ասաց նա:

Անդրադառնալով նրան, որ Կիրանցի նոր կառուցվող դպրոցը ընդամենը մի քանի տասնյակ մետր է հեռու սահմանից, Սրբազանն ասաց. «Ինչու այն ժամանակ բերել են, այստեղ են կառուցել դպրոցը՝ իմանալով հանդերձ, թե ինչ են անելու:

Եթե այսպես շարունակվի, հաստատ ասում եմ՝ այստեղ մարդ չի ապրելու, եւ ոչ միայն այս գյուղը»:

Դիտարկմանը, որ իշխանական շրջանակներն իրեն մեղադրում են, որ կար պայմանավորվածություն արագ սահմանազատման գործընթաց իրականացնել, բայց ինքը այս շարժումով դա վիժեցրել է, Բագրատ Սրբազանն արձագանքեց. «Լավ ենք րել, վիժեցրել ենք Հայաստանի հանձնումը: Էս մարդիկ ամեն գնով ամեն ինչի պատրաստ են, մենք դա ենք վիժեցրել եւ լավ ենք արել, ճիշտ ենք արել եւ շարունակելու ենք անել: Իրենց վիժեցնելու նաեւ, ոչ միայն գործընթացը»:

Բագրատ սրբազանն անդրադարձել է նաեւ Էդմոն Մարուքյանի կողմից արված հայտարարությանը:

Էդմոնը իզուր տեղը թող չփորձի ջրեր պղտորել: Այս մասին երեկ հունիսի 21-ին Տավուշի Կիրանց գյուղում լրագրողների հետ զրույցում նշեց Բագրատ Սրբազանը՝ անդրադառնալով «Լուսավոր Հայաստանի» նախագահ Էդմոն Մարուքյանի հայտարարություններին, ով նշել էր, որ Բագրատ Սրբազանը քաղաքական ուժերի հետ հանդիպել է հյուրանոցում, հետո իրեն տարել են Սերժ Սարգսյանի տուն՝ հանդիպելու, ինչը ինդիկատոր է:

«Եթե սկսեմ մեղադրանքների, վերլուծությունների լեզվով խոսել, էնքան բան կա մեղադրելու: Ժամը կգա դա էլ կասեմ, բայց ես հնարավորություն եմ տալիս իրենց խելքի գալու»,- ասաց նա:

Դիտարկմանը, որ Էդմոն Մարուքյանն իրեն մեղադրում է գործարքի գնալու մեջ, Սրբազանն ասաց. «Դե ինքը հատուկ հանձնարարություններով դեսպան է, երեւի կարող է ասել»:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի կողմից, ճշված քաղաքական առաջնահերթությունների շրջանակում, շարունակվում են ԱՄՆ Կոնգրեսում հայկական շահերի պատշտպանության ուղղությամբ բազմամակարդակ աշխատանքները:

Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցների սահմանման, այդ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության կոնկրետ անձանց նկատմամբ թիրախային պատժամիջոցների սահմանման, Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան օժանդակությունն ամբողջապես կասեցնելուն, արցախցի փախստականներին ու Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող ամերիկյան օժանդակության շեշտակի ավելացման, Հայաստանի պաշտպանունակության բարձրացմանը վերաբերող միանգամից մի քանի բանաձեւերի նախագծեր գտնվում են Կոնգրեսի երկու պալատներում համապատասխան օրենսդրահիրավական գործընթացի մեջ: Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը, համայնքային ներգրավմամբ, շարունակում է քաջալերել Կոնգրեսի անդամներին՝ հանդես գալու նոր նախաձեռնություններով եւ միանալու առկա նախաձեռնություններին:

Ասվածի շրջանակներում վերջին զարգացումները տեղի են ունեցել ամերիկյան Սենատում, որտեղ Սենատի զինվորական ծառայությունների հանձնաժողովի նախագահ Ջեք Ռիդի եւ Սենատի բյուջետային հանձնաժողովի նախագահ Շելդոն Ուայթհաուսի առաջնորդությամբ 20 կոնգրեսականներ նամակով դիմել են նախագահ Բայդենին՝ կոչ անելով շեշտակի մեծացնել արցախցիներին տրամադրվող ամերիկյան օժանդակությունը, ինչպես նաեւ միջազգային անվտանգային երաշխավորության պայմաններում ապահովել նրանց վերադարձի իրավունքի իրացումը: Նամակում նաեւ կոչ է արվում պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին՝ իրականացված պատերազմական հանցագործությունների համար:

Կոնգրեսական այս նախաձեռնությունը մեկնաբանելով՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է? «Քանի որ ավելի քան 115?000 հայեր դեռեւս վտանգի տակ են, որոնք բախվում են բնակարանների, սննդի, էներգիայի, աշխատանքի եւ բժշկական օգնության հասանելիության մարտահրավերների, մենք ողջունում ենք սենատորներ Ռիդի եւ Ուայթհաուսի, նրանց գործընկերների այս սկզբունքային կոչը: Մենք պետք է տեսնենք, որ այս օգնությունը տրամադրվում է Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու կոնկրետ քայլերին եւ ամերիկյան կայուն արշավին զուգահեռ՝ ապահովելու արցախահայերի անվտանգ վերադարձն իրենց բնիկ հայրենիք՝ միջազգային պաշտպանության ներքո»:

Հունիսի 20-ին նախագահ Բայդենին ուղղված նամակում սենատորները շեշտել են. «Մենք վերջերս ճանաչեցինք Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցը, Միացյալ Նահանգները պետք է քայլեր ձեռնարկի, որպեսզի էթնիկ հայերի նկատմամբ հետապնդումները այլեւս երբեք չկրկնվեն: Սա ներառում է Հայաստանին հավելյալ մարդասիրական եւ տնտեսական աջակցություն տրամադրելը, հայ-ամերիկյան կապերի ամրապնդումը եւ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելը, այդ թվում՝ պատժամիջոցների հնարավոր կիրառումը մարդու իրավունքների ցանկացած խախտման համար»:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ՍՊԻՏԱԿՑԻ ՀԱՅԿՈՅԻ ՏԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն Ազգային անվտանգության ծառայության հետ համատեղ երգիչ Հայկ Ղեւոնդյանի՝ Սպիտակցի Հայկոյի որդու՝ Հրաչյա Ղեւոնդյանի քրեական գործի շրջանակներում մտել է նրանց տուն՝ խուզարկության:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ խուզարկությունը սկսվել է վաղ առավոտյան ժամը 8:30-ի սահմաններում: Տանն այդ պահին անգամ եղել է երգիչ Սպիտակցի Հայկոն, որը դժգոհություն է հայտնել, թե ինչու են այդ ժամին մտնում մարդկանց տուն խուզարկության: Ինչեւէ՝ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դաձավ, որ խուզարկելուց հետո Սպիտակցի Հայկոյի տանից քրեական գործի հետ առնչություն ունեցող որեւ բան չի հայտնաբերվել եւ որեւէ բան իրավապահները չեն առգրավվել:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Գլխավոր դատախազությունը խիստ է տրամադրված եւ ամեն գնով ցանկանում է կալանքի տանել երգիչ Հայկ Ղեւոնդյանի՝ Սպիտակցի Հայկոյի որդուն՝ Հրաչյա Ղեւոնդյանին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դատախազությունը բողոքարկել է հայտնի երգչի որդու ազատ արձակման որոշումը:

Ինչպես հայտնի է, մայիսի 23-ին Հրաչյա Ղեւոնդյանն ազատ էր արձակվել դատական նիստերի դահլիճից. դատարանը, հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, մերժել էր նրան կալանավորելու՝ քննիչի միջնորդությունը:

Բանն այն է, որ քննչական կոմիտեն հայտարարել էր, որ իշխանությունը բռնությամբ զավթելու փորձ է կանխել: Իշխանությունը յուրացնելու նախապատրաստության համար մեղադրանք է առաջադրվել հանրությանը «Սպիտակցի Հայկո» անունով հայտնի երգիչ Հայկ Ղեւոնդյանի որդուն, նրան կալանավորելու միջնորդություն է ներկայացվել:

Քննչական կոմիտեն տեսանյութ էր հրապարակել, որում մի տղամարդ դժգոհում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունից.

«Ստեղ մի ելք կա՝ մտնենք կառավարությունը գրավենք, մտնենք Ազգային Ժողով՝ գրավենք, մտնենք ոստիկանության շենք՝ գրավենք: Հիմա ես պատրաստ եմ մեռնեմ, ցավդ տանեմ, պիտի կրակեն՝ թող կրակեն, ավելի լավ ա մի 10-20 մարդ մեռնի, բայց, ընկեր, երկիր, պահես»:

Քննչականը պնդում է, թե այս խոսքերի հեղինակը Հրաչյա Ղեւոնդյանն է, որը նպատակ է ունեցել մի խումբ անձանց հետ զավթելու իշխանությունը: Թե ովքեր են այդ անձինք, իրավապահները դեռ չեն պարզել, բայց, ըստ նախաքննական մարմնի, դիտարկվել էր նաեւ հանրահավաքին այդ ծրագիրն իրագործելու հարցը:

Ղեւոնդյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը: Նրա փաստաբանը հայտարարել էր՝ ձայնագրությունը մոնտաժված է, կոնտեքստից կտրված, իսկ իր պաշտպանյալն իշխանությունը զավթելու որեւէ մտադրություն չի ունեցել:

Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վերաքննիչ դատարանը հունիսի 24-ին կհրապարակի որոշումը, թե բավարարել է դատախազությունը բողոքը, թե ոչ: Իսկ ահա որոշում կայացնող դատավորը ՀՀ վերաքննիչ դատարանի դատավոր Աննա Մաթեւոսյանն է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ՝ ԿԱԼԱՆՔ

ՈՐՈՇՈՒՄ՝ ԴԱՏԱՎՈՐ ԴՍՏԵՐ ԳՈՐԾՈՎ

Այս տարվա մարտի 26-ին հայտնել էինք, որ Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի օգնականին կալանավորել են:

ՀՀ քննչական կոմիտեից նշել էին, որ անձին ներկայացվել է մեղադրանք առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելուն օժանդակելու համար:

Քիչ առաջ ՀՀ քննչական կոմիտեն մանրամասներ հայտնեց խարդախության գործով:

Մասնավորապես՝ Կոտայքի մարզի 32-ամյա բնակիչը 2022թ. ստեղծել է հանցավոր կազմակերպություն: Խմբի գործողությունները հաջողությամբ քողարկելու եւ դրա բացահայտումն անհնարին դարձնելու նպատակով 32-ամյա տղամարդը նրանց հետ կապն ապահովել է համացանցային տարբեր հավելվածների միջոցով, հանցավոր կազմակերպության մասնակիցներին տվել է երաշխիքներ եւ խորհուրդներ՝ իրենց կատարած հանցանքների համար քրեական պատասխանատվությունից խուսափելու մեխանիզմների վերաբերյալ:

Ըստ նախաքննական մարմնի 2022-2023թթ. ընթացքում հանցավոր կազմակերպության անդամները պատրաստել եւ օգտագործել են կեղծ անձնագրեր, ամուսնության կեղծ վկայականներ, իբրեւ թե ՌԴ-ում տարբեր նոտարների կողմից վավերացված կեղծ լիազորագրեր եւ տեղեկանքներ: Հանցավոր կազմակերպության անդամները դրանք օգտագործել են պետական տարբեր մարմիններում, դատական ատյաններում եւ խարդախության եղանակով հափշտակել են չորս անշարժ գույք՝ բնակարաններ, որոնցից 3-ը՝ էջմիածին քաղաքում, 1-ը՝ Երեւանում՝ հիմնականում թիրախավորելով կենդանության օրոք միայնակ բնակված տարեց եւ ժառանգ չունեցող անձանց:

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված անշարժ գույքերը խմբի անդամները վաճառել են:

Այնուհետեւ, հանցավոր կազմակերպության անդամները, առանձին դեպքերում տեղեկանալով թիրախավորված բնակարանների սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ կտակի առկայության մասին, այդ անշարժ գույքը խաբեության եղանակով հափշտակելու նպատակով, կեղծ լիազորագրերի հիման վրա հանդես են եկել որպես տուժողների ներկայացուցիչներ եւ իրավասու մարմիններ ներկայացնելով այդ կեղծ փաստաթղթերը՝ նրանց անունից կատարել են սեփականության գրանցման եւ գույքի օտարման գործարքներ:

Քննությամբ ձեռք բերված տվյալներով՝ հափշտակությունների հետեւանքով քաղաքացիներին պատճառվել է ընդհանուր 52.162.500 ՀՀ դրամի վնաս:

Բոլոր մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Նախաքննությունը նշված 7 անձանց մասով ավարտվել է:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՒՄԱՐ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԴԻՄԱՑ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Վ. Ս.-ն, պաշտոնատար անձանց կաշառք տալու միջնորդության պատրվակով, ժամկետային զինծառայողից եւ վերջինիս մորից ստացել է խոշոր չափերի՝ 1.500.000 ՀՀ դրամ եւ 90.000 ՀՀ դրամի խմիչք:

Մասնավորապես՝ Երեւանի բնակիչ Կ. Պ.-ն 2024 թվականի հունվարին ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ տեղափոխված ժամկետային զինծառայող Ա. Մ.-ին զինվորական հետագա ծառայությունից ազատելու խնդրանքով դիմել է իր ծանոթ Վ. Ս.-ին՝ միաժամանակ տեղեկացնելով, որ հիշյալ հարցը լուծելու համար Ա. Մ.-ն եւ նրա մայրը պատրաստ են կաշառք տալ:

Տեղեկանալով զինծառայողի եւ նրա մոր կողմից կաշառք տալու պատրաստակամության մասին, սակայն իրականում նպատակ չունենալով նշված հարցով դիմել որեւէ պաշտոնատար անձի, կաշառքի միջնորդության պատրվակով գումար ստանալու դիտավորությամբ Վ. Ս.-ն Կ. Պ.-ին վստահեցրել է, թե իբր իր ծանոթ պաշտոնատար անձանց 3.000 ԱՄՆ դոլար կաշառք տալու դիմաց հնարավոր է կազմակերպել Ա. Մ.-ին հետագա զինվորական ծառայությունից ազատելու հարցը:

Ա. Մ.-ն եւ նրա մայրը, տեղյակ չլինելով Վ. Ս.-ի իրական մտադրության մասին, 2024 թվականի հունվարի 11-ից փետրվարի 19-ն ընկած ժամանակահատվածում, Կ. Պ.-ի միջնորդությամբ Վ. Ս.-ին են փոխանցել խոշոր չափերի՝ 1.500.000 ՀՀ դրամ եւ 90.000 ՀՀ դրամի խմիչք:

Նախաքննության ընթացքում Վ. Ս.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 440-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննելու համար:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 20-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 128 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԴ

ԻՋԵՎԱՆՈՒՄ 3 ՍԵՆՅԱԿԱՆՈՑ ԲՆԱԿԱՐԱՆ Է ԳՆԵԼ

Իջեւան համայնքի Կիրանց գյուղի վարչական ղեկավար Կամո Շահինյանին հարցրինք, թե ի՞նչ փուլում է Ադրբեջանի հետ սահմանազատման հետեւանքով տներ, տարածքներ կորցրած Կիրանցի բնակիչներին պետության կողմից ֆինանսական փոխհատուցման գործընթացը: Նա ասաց, որ այդ գործով ինքը չի զբաղվում, միայն գիտի, որ Ադրբեջանին հանձնվելիք տներից մեկի տերը՝ Խանում Թամրազյանն Իջեւան քաղաքում 3 սենյականոց բնակարան է գնել, սակայն նա Կիրանցում բնակվելու համար վագոն-տնակ է դրել: Ադրբեջանին հանձնվելիք մյուս տան տան տերը՝ Մհեր Սիմոնյանը շարունակում է Կիրանցում բնակվել: Վարչական ղեկավարին հարցրինք՝ Խերմլի գյուղի տարածքին կից, Կիրանցին պատկանող 45 հեկտար հողերը մշակելու հետագա հնարավորության մասին, երբ սահմանազատման հետեւանքով այդ հողեր տանող ճանապարհը անցել է Ադրբեջանին: Նա ասաց, որ այդ հողերից գրեթե 30 հեկտարում ցորեն է ցանված, մնացած հողերը նախատեսում էին ծխախոտ մշակել, սակայն այս տարի, կապված իրավիճակի հետ, ծխախոտ չեն մշակել, այդ հողերում չեն ցանել: Վարչական ղեկավարը հայտնեց, որ Կիրանց գյուղից այդ հողերը տանող այլընտրանքային ճանապարհ, կամուրջ կկառուցվի: Ներկայումս ընթացքի մեջ է միջպետական ավտոճանապարհի նոր հատվածի եւ կամրջի շինարարությունը, ճանապարհը ձգվելու է Աճարկուտ գյուղով: Նոր կամուրջը, ըստ Կամո Շահինյանի, կառուցվում է գետի վրա հողի մեծ լիցք անելու եղանակով: Նոր ճանապարհի շինարարությունն իրականացնում է Էդվարդ Բեզոյանի «Ճանապարհ» ընկերությունը, այն պետք է պատրաստ լինի հուլիսի 24-ին: Կ. Շահինանն ասաց, որ Կիրանցի բնակիչները չեն ցանկանում, որ իրենց երեխաները աշնանը հաճախեն սահմանազատման հետեւանքով սահմանին շատ մոտ հայտնված, նորակառույց դպրոց: Նշենք, որ այդ դպրոցի շինարարության համար պետբյուջեից 615 միլիոն դրամ է ծախսվել: Շահինյանն ասաց, որ կառավարությունը խոստացել է Կիրանցի համար դպրոցի նոր շենք կառուցել, իսկ դպրոցի նորակառուց շենքը կարող է օգտագործվել այլ նպատակներով: Կիրանցի վարչական ղեկավարն ասաց, որ բնակիչների մեջ գյուղից հեռանալու տրամադրություններ չկան, չնայած չի բացառվում, որ մեկ կամ երկու ընտանիք որոշի այլ բնակավայր տեղափոխվել: Նա հավելեց, որ Կիրանցում ներկայումս շատ հողերի կադաստրային նշանակությունը փոխում են, որպեսզի դրանք տրվեն տուն, տարածքներ կորցրած Կիրանցի բնակիչներին՝ առանձնատան, հասարակական օբյեկտի կառուցման նպատակով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

«ՇԻՐՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»

Մայն թվականի հունիսի 20-ին «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը Գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպել էր աշխատաժողով՝ «Շիրվանի պատմության հիմնահարցեր» թեմայով: Աշխատաժողովի ժամանակ քննարկվեցին Աղվանքում (Կուրի ստորին հոսանքից մինչեւ Կասպից ծով) առաջացած տարբեր վարչական միավորներին, մասնավորապես՝ Շիրվանին առնչվող հիմնահարցեր:



«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանն իր բացման խոսքում նշեց, որ Ադրբեջանը բոլոր միջոցներով փորձում է յուրացնել հարեւան ժողովուրդների՝ հայերի, իրանցիների, վրացիների, դաղստանցիների, թուրքմենների պատմությունն ու մշակույթը: Նա ընդգծեց, որ հենց այս համատեքստում է կարեւորվում Շիրվանի պատմությունը: Ռոբերտ Ղազարյանը նաեւ նշեց, որ ադրբեջանական իշխանություններն ամեն գնով փորձում են ներկայացնել, թե Շիրվանն իրենց պատմության մի մասն է, եւ այնտեղ ստեղծված մշակույթն ադրբեջանական է: Հիմնադրամի տնօրենն ուշադրություն հրավիրեց այն փաստին, որ, թեեւ պատմական Շիրվանը գտնվում է Ադրբեջանի տարածքում, այն ժառանգությունը, որ դարերով ստեղծվել է այդ տարածաշրջանում, ուղիղ իմաստով որեւէ առնչություն չունի ներկայիս ադրբեջանցի կոչվող հանրույթի հետ:

Աշխատաժողովի մասնակիցներին ողջույնի խոսք հղեցին «Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միության նախագահ Վիլեն Գաբրիելյանը եւ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տնօրեն Արման Եղիազարյանը: Վիլեն Գաբրիելյանն անդրադարձավ Շամախիի պատմությանը՝ որպես շիրվանահայության կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի եւ արհեստագործության ու վաճառականության հիմնական կենտրոնի: Նա ընդգծեց, որ Շամախիի հայ առեւտրականներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել տարանցիկ ողջ առեւտուրը:

Արման Եղիազարյանն էլ ամփոփ ներկայացրեց Շիրվանի պատմությունը՝ նշելով, որ այն Արմինիա վարչատարածքային միավորի մի մասն է եղել, ժամանակին գտնվել է նաեւ հայ Բագրատունիների թագավորության ազդեցության գոտում:

Ելույթներով հանդես եկան մի շարք հեղինակավոր գիտնականներ: Պատմական գիտությունների դոկտոր Ալեքսան Հակոբյանը ներկայացրեց Շաքի-Շիրվան երկրամասերում հայերին եւ ուդի-աղվաններին առնչվող վիճակագրությունը: Նա նշեց, որ, ըստ Մակար արք. Բարխուդարյանցի հավաքագրած տվյալների, Շիրվանի հայ բնակչությունը հիմնականում գաղթել է Արցախից:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի եւ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող Արտակ Մաղալյանն անդրադարձավ 16-17-րդ դարերում Արեւելյան Այսրկովկասում ապրող հայերին, իսկ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Տորք Դալալյանը ներկայացրեց Շիրվան տեղանվան ստուգաբանությունը՝ որպես տարածաշրջանի իրանացման հետեւանք:

Քննարկման մասնակիցները նշեցին, որ հայերի ներդրումը զգալի է եղել նաեւ Բաքվում: Մասնավորապես՝ ծանրակշիռ էր հայ առեւտրաարդյունաբերական խավի դերակատարությունը՝ հատկապես նավթարդյունաբերության ոլորտում, ֆինանսավարկային եւ բանկային համակարգերի կազմավորման ու զարգացման գործում:

Գիտաժողովի մասնակիցները շեշտեցին, որ հայերի ներկայությունը տարածաշրջանում կտրուկ անկում ապրեց 1918-1920թթ.՝ Թուրքիայի եւ մուսավաթական Ադրբեջանի՝ երկրամասի հայ բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպանության հետեւանքով: Հետագայում՝ 1988-1990թթ., Շիրվանի տարածաշրջանն իսպառ հայաթափվեց:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը հունիսի 20-ին ընդունել է «Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միության նախագահ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիլեն Գաբրիելյանին եւ «Լեռնային Ղարաբաղի փախստականների իրավապաշտպան միություն» հասարակական կազմակերպության նախագահ Անդրանիկ Գրիգորյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հարցեր: Այս համատեքստում Պաշտպանը նշել է, որ ապաստան հայցողների եւ փախստականների իրավունքների պաշտպանությունն իր աշխատանքի կարեւոր ուղղություններից է: Այն իրականացվում է ինչպես ամենօրյա աշխատանքային գործունեության, այնպես էլ տարեկան հաղորդումների եւ արտահերթ զեկույցների, միջազգային եւ ներպետական կառույցների հետ համագործակցության, իրազեկվածության բարձրացման միջոցառումների եւ այլ ձեւաչափերով, [17:58, 20.06.2024] Artur Aslanyan: Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը հունիսի 20-ին ընդունել է «Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միության նախագահ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիլեն Գաբրիելյանին եւ «Լեռնային Ղարաբաղի փախստականների իրավապաշտպան միություն» հասարակական կազմակերպության նախագահ Անդրանիկ Գրիգորյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հարցեր: Այս համատեքստում Պաշտպանը նշել է, որ ապաստան հայցողների եւ փախստականների իրավունքների պաշտպանությունն իր աշխատանքի կարեւոր ուղղություններից է: Այն իրականացվում է ինչպես ամենօրյա աշխատանքային գործունեության, այնպես էլ տարեկան հաղորդումների եւ արտահերթ զեկույցների, միջազգային եւ ներպետական կառույցների հետ համագործակցության, իրազեկվածության բարձրացման միջոցառումների եւ այլ ձեւաչափերով ոլորտային խնդիրների բարձրաձայնման միջոցով:

Քննարկվել են բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը, սոցիալական երաշխիքները եւ այլն:

Պաշտպանն ընդգծել է, որ պետական մարմինները պետք է լրջագույն ջանքեր գործադրեն իրավունքի գերակայության ապահովման, բռնի տեղահանված անձանց, ապաստան հայցողների եւ փախստականների իրավունքների պաշտպանության եւ խախտված իրավունքների վերականգնման, իրազեկման աշխատանքների իրականացման, միջազգային իրավական փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների անխոչընդոտ իրականացման հարցերում:

ք. Երեւան 0002, Պուշկին 56ա
Հեռ. + 374 10 537 634
Բջջ. + 374 91 008 812
www.ombuds.am ; www.children.ombuds.am

Իրենց հերթին հյուրերը շնորհակալություն են հայտնել Պաշտպանին ընդունելության եւ արդյունավետ քննարկման համար:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

Team Energy

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Team Telecom Armenia-ն շարունակում է զարգացնել Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցը՝ առաջարկելով հատուկ փաթեթներ անհատական եւ կորպորատիվ հաճախորդներին: Ընկերությունը մասնակցում է Armenian Auto Show 2024 միջազգային ավտոցուցահանդեսին, որը մեկ հարկի տակ է հավաքել ավտոարդյունաբերության եւ հարակից ոլորտների առաջատար ներկայացուցիչներին:

Գործունեության մեկնարկից ի վեր Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների թիվը կրկնապատկվել է՝ 31-ից հասնելով 64-ի: Այս մասին հայտնեց ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

«Այս նախագիծը մեզ համար ռազմավարական նշանակություն ունի, քանի որ նպաստում է շրջակա միջավայրի համար էկոլոգիապես մաքուր մեքենաների ավելացմանը՝ զգալիորեն կրճատելով օդի աղտոտվածությունը եւ տրանսպորտային ծախսերը: Սա լավ օրինակ է, թե ինչպես բիզնեսը կարող է դրական ազդեցություն ունենալ երկրում մի ամբողջ էկոհամակարգի զարգացման վրա»:

Լիցքավորման կայաններն ապահովում են մինչեւ 160 կՎտ հզորություն եւ նախատեսված են ցանկացած մակնիշի էլեկտրական մեքենաների համար:

Կայանների ցանցն էլ ավելի մեծացնելու նպատակով ընկերությունը ոլորտով հետաքրքրվող անձանց առաջարկում է, համագործակցելով Team Energy-ի հետ, ստեղծել համատեղ կայան եւ ստանալ համակարգի ամբողջական սպասարկում, իսկ էլեկտրական մեքենաների պարկ ունեցողներին՝ օգտվել մեքենաների լիցքավորման գործընթացը վերահսկող հատուկ համակարգից:

Հիշեցնենք, որ Team Energy հավելվածը հասանելի է App Store-ում եւ Google Play-ում: Այն հնարավորություն է տալիս գտնելու մոտակա լիցքավորման կետերը, հեշտությամբ կատարելու լիցքավորում եւ վճարելու բանկային քարտի միջոցով, իսկ Team Telecom Armenia-ի բաժանորդ լինելու դեպքում՝ նաեւ Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից:

Armenian Auto Show 2024-ը կգործի հունիսի 21-ից 23-ը՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Kaspersky Security Day. ԿՈՆՖԵՐԱՆՍ

Երեւան, 21 հունիսի, «Կասպերսկի» ընկերության Հայաստանի ներկայացուցչություն: Կիբեռանվտանգության միջազգային առաջատար «Կասպերսկի» ընկերությունը Հայաստանում շարունակում է պետական եւ մասնավոր հատվածի կազմակերպություններին կիբեռանվտանգության ոլորտի փորձի ու գիտելիքների փոխանցման ծրագրերը: Ընկերությունը հունիսի 21-ին Երեւանում՝ «Մատենադարան» Մ.Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի նոր մասնաշենքում անցկացրել է «Kaspersky Security Day» իններորդ գործնական կոնֆերանսը՝ «Կիբեռանվտանգությունը որպես արվեստ» խորագրով, որը նվիրված էր խոշոր կազմակերպությունների դեմ ուղղված ժամանակակից կիբեռսպառնալիքները չեզոքացնելու եւ դրանց հետեւանքները նվազագույնի հասցնելու մեթոդներին եւ գործիքներին: «Kaspersky Security Day»-ին մասնակցել են ՀՀ գերատեսչությունների, հայկական եւ միջազգային առաջատար ընկերությունների ներկայացուցիչներ, որոնք ունեն կիբեռանվտանգության ոլորտում որոշումներ կայացնելու լիազորություն:

«Kaspersky Security Day»-ն անցկացրել են ընկերության առաջատար փորձագետները: Միջոցառումը բացել է Հայաստանում եւ Վրաստանում «Կասպերսկի» ընկերության տարածքային ներկայացուցիչ Արմեն Կարապետյանը: Ընկերության Սպառնալիքների հետազոտման եւ վերլուծության գլոբալ կենտրոնի (GReAT) տեղեկատվական անվտանգության սպառնալիքների առաջատար հետազոտող Տատյանա Շիշկովան ներկայացրել է «Գործողության վայրը՝ 2024 թվական. ժամանակակից սպառնալիքներ եւ պաշտպանության մեթոդներ», իսկ Ռուսաստանում, Անդրկովկասի եւ Միջին Ասիայի երկրներում մարքեթինգի վարչության ղեկավար Ջաբրաիլ Մատիեւը՝ «Կատարյալ ներդաշնակություն. «Կասպերսկի» ընկերության կիբեռանվտանգության լուծումների պորտֆոլիո» թեման: «Կասպերսկի»-ի տեղեկատվական անվտանգության եւ SOC ծառայությունների մոնիթորինգի համակարգերի ներդրման նախագծերի ուղեկցման խմբի ղեկավար Եվգենյա Լագուտինան անդրադարձել է «Kaspersky Symphony XDR. համալիր պաշտպանության նոր հնարավորություններ»-ին, խոշոր բիզնեսի համար նախագծերի նախավաճառքային աջակցության տնօրեն Եվգենի Բուդարինը «Բոլոր մակարդակներում թիրախային գրոհների դեմ առաջադեմ պաշտպանություն «Կասպերսկի» ընկերության լուծումներով» թեմային:

«Այս կոնֆերանսում «Կասպերսկի»-ն ներկայացրեց բիզնեսի համալիր պաշտպանության իր պորտֆելի զգալի թարմացումները եւ ընդլայնումները: Դրանում իրագործված է տեղեկատվական անվտանգության նկատմամբ էկոհամակարգային մոտեցումն այնպես, որ միմյանց հետ սերտորեն ինտեգրված պրոդուկտները, որոնք գործում են կատարյալ ներդաշնակությամբ, թույլ են տալիս հայտնաբերել եւ կանխել ամենաբարդ կիբեռգրոհները»,- նշում է Հայաստանում եւ Վրաստանում «Կասպերսկի» ընկերության տարածքային ներկայացուցիչ Արմեն Կարապետյանը:

«Kaspersky Security Day»-ի մասնակիցները ընկերության առաջատար փորձագետներից հարց ու պատասխանի միջոցով ստացել են համապարփակ գիտելիքներ կազմակերպությունների SS ենթակառուցվածքի անվտանգության ամենակարեւոր ասպեկտների վերաբերյալ, ինտերակտիվ քննարկել եւ պարզաբանել են կիբեռանվտանգության վերաբերյալ հետաքրքրող բոլոր հարցերը:

ՀԱՄԱՏԵՂ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՆ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ

Տասնյակ գործարարներ եւ խոշոր ընկերությունների ղեկավարներ Հայաստանից օրերս այցելել էին Գերմանիա՝ ճնարակելու Եվրոպայի լավագույն բիզնես դպրոցներից մեկի՝ «ESMT Berlin»-ի եւ հայաստանյան «Մատենա» միջազգային դպրոցի համատեղ կրթական ծրագրերը, ինչպես նաեւ առաջիկայում նախատեսվող կրկնակի դիպլոմով եւ 1.5 տարի տեւողությամբ EMBA ծրագիրը, որը հատուկ մշակված է ղեկավարների համար եւ անցկացվելու է Հայաստանում, Գերմանիայում, Կիպրոսում եւ Դուբայում:

Խոշոր ընկերությունների հիմնադիրներից, բանկերի տնօրեններից բացի, հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՀՀ ԿԳՄՍՆ նախարարը՝ իր գլխավորած պատվիրակությամբ, եւ Գերմանիայում Հայաստանի դեսպանը:

«ESMT Berlin»-ի նախագահ Յորգ Ռոխոլը, ողջունելով հյուրերին, ընդգծել է, որ, հիմնադրված լինելով այնպիսի ընկերությունների կողմից, ինչպիսիք են «Mercedes-Benz»-ը, «Deutsche Bank»-ը, «Siemens»-ը, «Mckinsey»-ն եւ այլն, իրենք շատ բծախնդիր են գործընկերներ ընտրելու հարցում, եւ «Մատենայի» հետ գործընկերության հիմքում ընկած է վստահությունն ու բիզնես կրթության համաշխարհային բարձր որակը, որն ապացուցվել է համատեղ կարճաժամկետ ծրագրերի փորձով:

«Մատենայի» համահիմնադիր եւ տնօրեն Ռուբեն Հայրապետյանն իր հերթին նշել է, որ Եվրոպայի լավագույն բիզնես դպրոցներից մեկի եւ «Մատենայի» համատեղ ծրագիրը կարող է դառնալ լավագույնը ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ տարածաշրջանում՝ ներգրավելով միջազգային մասնակիցների:

«Krisp»-ի համահիմնադիր Արտավազդ Մինասյանը եւ «Adobe Armenia»-ի տնօրեն Լիաննա Հայրապետյանը համակարծիք են եղել, որ նման ծրագրի առկայության դեպքում իրենք այլեւս ստիպված չեն լինի միայն արտասահմանից փնտրել համաշխարհային մակարդակի ղեկավարների ու կառավարիչների իրենց ընկերությունների համար: Բիզնես առաջնորդները կարեւոր են համարել Հայաստանում այդպիսի որակի բիզնես կրթություն ունենալը:

Նախատեսվում է, որ «ESMT Berlin»-ի եւ «Մատենայի» համատեղ EMBA ծրագիրը կմեկնարկի մեկ տարվա ընթացքում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ

ՆԿԱՐԻՉ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ SarGiz-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Հուլիսի 1-ին՝ ժամը 19:00-ին, Իգիթյանի անվան գեղագիտության կենտրոնում (Աբովյան 13) կկայանա նկարիչ, քանդակագործ Գագիկ Սարկիսյանի՝ SarGiz-ի անհատական ցուցահանդեսի պաշտոնական բացումը:

Ցուցահանդեսի ընթացքում արվեստասերները հնարավորություն կունենան դիտել երջանկահիշատակ արվեստագետի մի քանի տասնյակ աշխատանքներ, որոնց շնորհիվ պատկերացում կկազմեն SarGiz-ի թողած հարուստ ժառանգության մասին: Իրադարձության նախաձեռնությունը Սարկիսյանի ընտանիքինն է:

Ցուցահանդեսի մուտքն ազատ է: Այն կտեւի մինչեւ հուլիսի 4-ը:

«Արվեստը կրում է ժամանակի բոլոր շերտերի կարեւորությունը, բոլոր ժամանակների մշակութային կապը, մեկը մյուսին լրացնելու կարեւորությունը, ինչպես նաեւ, մեկը մյուսին ժխտելու անսպասելիությունը:

Արծաթը, պղնձի զարդանախշերը ստանում էին պատկերների մի նոր մեկնաբանություն, ստեղծելով կոմպոզիցիաների ներդաշնակ համայնապատկեր: Գույնը, գիծը, թափանցիկ միջնադարյան հայացքները, մաշված որմնանկարների ոսկեպատ - լույսը շշնջում են Աստծո խորհուրդների գանձարանում, պատկերները ստանում են մի նոր երանգ, կարեւորություն հաղորդելով արվեստին: Եթե արվեստը մարդու հոգու հայելին է, ապա Գագիկի ստեղծած արվեստում մենք մասնակցում ենք նրա անսահման սիրո զգացմունքների արտահայտմանը, որոնք կմնան իբրեւ արվեստի գլուխգործոցներ իր ժամանակի ու ժամանակից դուրս տիեզերական լռության ներքո...», - Գագիկ Սարկիսյանի մասին նշում է նրա ընկեր, նկարիչ Արմեն Խոջոյանը:

«Ապշեցուցիչ էր արհեստի ցանկացած տեսակում նրա աշխատելու կարողությունը: Բայց ավելի զարմանալի էր, երբ նրա արհեստը օգնության էր հասնում արվեստին: Թերթավոր պղնձից թեթեւ, մի շնչով արված անհավանական բարդության քանդակները, իդեալական ըստ մտահղացման եւ իրականացման: «Տրոյական նժույգը» հիասքանչ եւ բացառիկ կոմպոզիցիան ապշեցնում է իր բացարձակ գեղագիտությամբ: Հիանալի են կենդանիների պղնձե քանդակները՝ ցլի, խոյի, քարայծի: Տարօրինակ եւ արտասովոր է «Խաղաղաբերը» քանդակը: Կոլաժները: Դա նույնպես «Մեծ մարդու» գործ է: Կիրառել հինավուրց առարկաները, կահ-կարասին, փայտի ճաքերով կտորները, պղնձե թասերն ու գավերը, եւ այդ իրենց դարն ապրած առարկաներից ժամանակակից, կենսաշունչ եւ արդեն ժամանակային շրջանակներից դուրս ինչ-որ բան արարելը՝ ահա եւս մի նվաճված նպատակ, եւս մի գրավված ուղի: Գեղանկարչությունը: Բազում մտքեր, իրականացված տարակերպ կտավներում՝ գունավոր Բուդդաները եւ ցնորական բնանկարները: Իր թոռների քնքուշ եւ զարմանալիորեն գորովալից խմբանկարը: Թեթեւություն եւ բարդություն, գաղտնիք եւ ցանկացած հայացքի համար բաց գաղափար ահա անհամատեղելիի համատեղումը նրա նկարներում»,- այսպես է բնութագրում SarGiz-ի արվեստը նկարիչ Աննա Ադիյանը:

Նշենք, որ Գագիկ Սարկիսյանը ծնվել է 1957 թ.: 1979 թ. ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը: 1984-1992 թթ. աշխատել է Հնությունների վերականգման կոմիտեում, որպես փայտամշակման արվեստանոցի ղեկավար: Աշխատանքներ է իրականացրել Երեւանում, Աշտարակում, մասնակցել է Հառիճի եկեղեցու ձեւավորմանը: 1993 թ. հրավիրվում է Մոսկվա «Ուսադյբա Վալուեվա» վերականգման աշխատանքների մասնակցելու: 2000 թ.-ից մասնակցում է Սանկտ-Պետերբուրգում հայ նկարիչների ցուցահանդեսներին: 2005 թ.-ից սկսած մասնակցում է Մոսկվայում «Արտմանեժ» ցուցահանդեսին: 2006 թ.-ից մասնակցում է ՌԴ պատմության թանգարանում Հ. Իգիթյանի կազմակերպած ցուցահանդեսին: 2021 թ. հրավիրվում է «Մաչանենց» միջազգային սիմպոզիումին: Մահացել է 2023 թվականին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԵՐԳ

«ՕՍՄՈՍ ՏՐԻՈ»-Ն՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՄԲ

Ջազ երաժիշտ, դաշնակահար Վահագն Հայրապետյանն իր նոր «Օսմոս տրիո» խմբով առաջին անգամ ելույթ կունենա նկարիչ Տիգրան Չիթողցյանի «Տիգրան արտ ստուդիո»-ում, որտեղ երաժշտական երեկոների կազմակերպումն ավանդույթ է դարձել:

Հունիսի 23-ին ժամը 19:30-ից նկարչի ստուդիան կլցվի «Օսմոս տրիո»-ի յուրահատուկ երաժշտությամբ, որը ծնվում է համերգի ընթացքում: Տրիոյի անդամներն են Արտյոմ Մանուկյանը (թավջութակ) եւ Կարեն Քոչարյանը (հարվածայիններ):

«Մենք նվագում ենք երաժշտություն, որ ստեղծվում է համերգի ընթացքում բոլորի աչքի առաջ եւ հանդիսատեսի մասնակցությամբ, իմպրովիզ է, բայց հետո ստեղծագործությունները հանձնում ենք թղթին, ձայնագրում: Երաժշտությունը կախված է ունկնդրից, նրա էներգիայից, տրամադրությունից, վիբրացիայից»,-նշում է Հայրապետյանը:

Նա վերջերս նոր ստեղնաշարային գործիք է ձեռք բերել, որ կոչվում է Osmose: Այդ գործիքը նորարարություն է ստեղնաշարային գործիքների աշխարհում: «Խմբի անունը ընտրել եմ՝ ոգեշնչվելով գործիքից: Շատ տարօրինակ գործիք է՝ տարօրինակ տեսքով ու հնչողությամբ»,- ասում է երաժիշտը:

Խումբը նորաստեղծ է, սակայն ելույթներ է ունեցել տարբեր հարթակներում, իսկ Չիթողցյանի ստուդիայում առաջին անգամ են նվագելու:

Համերգը կիրականացվի «ԹԻ ԷՄ պրոդակշն»-ի նախաձեռնությամբ, որի ջանքերով «Տիգրան արտ ստուդիո»-ում հիշարժան երաժշտական երեկոներ պարբերաբար կազմակերպվում են: 2023-ին ստուդիան հյուրընկալել է Նյու Յորքից իտալացի թավջութակահար Ռիք Ռոզատոյին, որը Հայաստան էր ժամանել Տիգրան Համասյանի համերգային ծրագրի շրջանակում: 2024-ին այնտեղ համերգներով հանդես են եկել տաղանդաշատ երաժիշտներ Վարդան Օվսեփյանն ու Արտո Թունջբոյաջյանը: Առաջիկայում երաժշտասերները առիթ կունենան ունկնդրելու Լիլիթ Պիպոյանին:

Յուրաքանչյուր համերգից առաջ հանդիսատեսը հնարավորություն է ունենում վայելելու Տիգրան Չիթողցյանի ինքնատիպ ստեղծագործությունները, իսկ համերգի ընդմիջմանը վայելում է Ջորաղբյուրի մեղմ եղանակը:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԱԼԱՇԿԵՐՏ»-Ի ՄԱՐԶԻՉՆ Է

Երեւանի «Ալաշկերտ»-ը նորից կմարզի Աբրահամ Խաշմանյանը:

Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը: Խաշմանյանի գլխավորությամբ «Ալաշկերտ»-ը 2 անգամ հռչակվել է Հայաստանի չեմպիոն, մեկական անգամ էլ նվաճել է Հայաստանի Գավաթը եւ Սուպերգավաթը:

Աբրահամ Խաշմանյանը մարզչական կարիերայի ընթացքում աշխատել է «Միկա», «Արարատ», «Գանձասար», «Կիլիկիա», «Բանանց» «Ալաշկերտ» ակումբներում: Եղել է նաեւ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմ մարզիչը:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բասկետբոլի կանանց ընտրանու անդամները վերջին նախապատրաստական մարզումներն են անցկացնում փոքր երկրների Եվրոպայի առաջնությունից առաջ:

Ազգային ընտրանին երեւանյան հավաքով եզրափակում է նախապատրաստական փուլը:

«Հավաքականը բավականին լավ է պատրաստվել առաջիկա խաղերին: Փորձելու ենք լավագույնս հանդես գալ: Լինելով հավաքականի ամենակրտսեր անդամը՝ ձգտելու եմ հավասարվել բոլորին ու շատ բան սովորել նրանցից»,- «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ լրագրողների հետ զրույցում նման կարծիք հայտնեց Սեդա Գաբրիելյանը: Վերջինս ընդգծեց, որ իր համար հպարտություն է 17 տարեկանում ընտրանու անդամ լինելը:

Ազգային թիմի փորձառու բասկետբոլիստ Ինգա Մանուչարյանն էլ առանձնացրեց, որ ընտրանու անդամներն արդեն սկսել են իրար լավ հասկանալ:

«Վստահ եմ, որ Կոսովոյում կայանալիք առաջնության ժամանակ կկարողանանք շատ լավ հանդես գալ: Հույս ունեմ, որ կպայքարենք նաեւ չեմպիոնության համար»,-ասաց նա:

Հայաստանի բասկետբոլի կանանց ընտրանին կմասնակցի փոքր երկրների Եվրոպայի առաջնությանը, որը կմեկնարկի հունիսի 25-ին:

ՀԱՅՏՆԻ Է՝ ՈՎ ԿՓՈԽԱՐԻՆԻ

Հունիսի 17-ին Ֆրանսիայի հավաքականը 2024 թվականի Եվրոպայի առաջնության խմբային փուլի 1-ին տուրում հաղթել է Ավստրիայի հավաքականին: Խաղի վերջում ֆրանսիացիների հարձակվող Կիլիան Մբապեն կոտրել է քիթը եւ հոսպիտալացվել:

Ըստ ֆրանսիական L'Equipe հրատարակության, Նիդերլանդների հետ 2-րդ տուրի հանդիպման համար ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Դիդյե Դեշամը դաշտի կենտրոնում խաղադաշտ դուրս կբերի կիսապաշտպան Օրելիեն Չուամենիին Ն'Գոլո Կանտեի հետ միասին, իսկ Արդիեն Ռաբյոն, առաջին հանդիպմանն անցկացրեց կենտրոնում, Մբապեի փոխարեն կխաղա ձախ եզրային գրոհների վրա:

Թիմերի միջեւ հանդիպումը կկայանա հունիսի 21-ին «Ռեդ Բուլ Արենա», «Սենտրալշտադիոն» (Լայպցիգ) մարզադաշտում եւ կմեկնարկի ժամը 23:00-ին:

● *Հունիսի 26-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ծննդյան վկայական» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Ստելլա Մանուչարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, ապա պարտավո՞ր է արդյոք հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Անի Կիրակոսյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի բասկետբոլի կանանց ընտրանու անդամները վերջին նախապատրաստական մարզումներն են անցկացնում փոքր երկրների Եվրոպայի առաջնությունից առաջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 10 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +21 + 24
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 19 + 21 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.6.2024**
Հասցեն՝ Գերաքրքրության մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենական 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*